

ժամ ի նախատանացն սայրասուր սլաքօք, այժմ տեսանէ գորգին իւր թագաւոր պճնեալ պսակօք: Մարիամ որ ժողովեալ զամենայն բանս, խելամուտ լինէր ի սրտին խորհրդովք, ետես այսօր զելս ամենայն տարակուսանաց իւրոց հրճուանօք: Մեծութեանն՝ որում ակն ունէր որդւոյն հաւատովք. եղև ակնարկող այսօր զգալի իւր աչօք: Զթագաւորութիւնն՝ զոր խոստացաւ նմա հրեշտակն աւետեօք. նայեցաւ ճըլմարիտ՝ ի նստիլ անդրանկին յաթոռ բարձրելոյ Հօրն փառօք: Վասն այսորիկ ցնծայր, հրճուէր և այսպիսի ինչ ի բարձրանալն որդւոյն զկնի բարբառ արձակէր: Այսօր սիրտ իմ հաստատեցաւ. և բերան իմ յարձակեցաւ ի վրայ թշնամեաց. ով անդրանիկ իմ և Տէր, որ կափուցեալ տատանէր ի քո յանձառն խոնարհութենէ: Այսօր բարձրացուցին զգլուխ մօր քոյ փառօք որդի իմ և Աստուած, որ լուութեամբ կորանար ի բամբասիլ զկուսութիւն իմ յուսթի բժժանօք: Այսօր պայծառացուցեր զգէմս իմ նշուլից հետոց ոտինդ ձառագայթիւք, որ ի ժամ չարչարանաց քոց զգեցաւ սուգ՝ մթին ստուերօք: Այսօր լցեր զկանխասաց բանս աղախնոյ քոյ սքանչելեօք, զի ահա յայսմհետէ տան երանի ինձ ամենայն ազգք լիով բերանովք: Այսօր շնորհ ունիմ Գաբրիէլի ողջունին՝ զոր եզ աւետեօք զի տեսանեմ զքեզ ի հրեղէն նորա դասուն պաշտեցեալ երգովք:

Զայնոսիկ մայրն Աստուծոյ զկնի ելից որդւոյն հնչելով, դառնայր ապա ի դասս առաքելոցն հաղորդս կոչելով ի ցնծութիւն որդին զնոսա: Ո՛վ Պետրէ՛ ընդէ՞ր լռես, ահա հրեշտակք ակումբ առեալ եղանակեն շուրջ զվարդապետութեան քո զօրհնութիւնս, առ ըզգունդս քո, և խառնեա ի պարս նոցա, երգակցեա,